# Սև ա չոբանի շունը

Սև ա չոբանի շունը,
Հո՛պ, հո՛պ, մարալ, օ՛յ,
Մարալ, օ՛յ, մարալ, օ՛յ:
Կտանի յարիս քունը,
Հո՛պ, հո՛պ, մարալ, օ՛յ,
Մարալ, օ՛յ, մարալ, օ՛յ:

Կանաչ արտը վարել եմ,
Հո՛պ, հո՛պ, մարալ, օ՛յ,
Մարալ, օ՛յ, մարալ, օ՛յ:
Սիրած յարիս ճարել եմ:
Հո՛պ, հո՛պ, մարալ, օ՛յ,
Մարալ, օ՛յ, մարալ, օ՛յ:

Սարի գլխին ձուն եկավ,
Հո՛պ, հո՛պ, մարալ, օ՛յ,
Մարալ, օ՛յ, մարալ, օ՛յ:
Անուշ յարըս տուն եկավ,
Հո՛պ, հո՛պ, մարալ, օ՛յ,
Մարալ, օ՛յ, մարալ, օ՛յ:

Սարի գըլխի արևը,
Հո՛պ, հո՛պ, մարալ, օ՛յ,
Մարալ, օ՛յ, մարալ, օ՛յ:
Կառնեմ յարիս բարևը,
Հո՛պ, հո՛պ, մարալ, օ՛յ,
Մարալ, օ՛յ, մարալ, օ՛յ: